

Բ.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՓՈՏԻ ԶԱՆՔԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ

Կ. ՊՕԼՍՈՅ ԿԱՄ ՅՈՒՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝)

Յառաջ բերուած վարդապետութիւնը ըստ ամենայնի ուղղափառական է¹⁾, ինչպէս ընդհանրապէս, ուղղափառական են 15 նորոգքները²⁾: Քաղկեդոնի ժողովը ընդունուած է. և եթէ «պա-

*) Տես Արարատ, սեպտ.—դեկտ., էջ 806—812.

1) Արդին Աստուած է «կատարեալ Աստուած Հորից եւ կատարեալ մարդ՝ Կուսից, անմայր՝ վերեւում, եւ անհայր՝ ի ստորինս, երկու կատարեալ քնուծիւններից մի Արդի, խառնուած եւ միացած... մի քարոզ դէմք եւ ի մի քարոզ անձն... Մարմնացած Աստուած քանը Աստուածութեան եւ մարդկութեան երկու քնուծիւնների առանձնութիւնները պահում է ամբողջ, չփոփոխելով իւր էութիւնը»։ Թ. Տեղ.

— Աստուած կատարեալ ի հօրէ եւ մարդ քաղանդակ ի կուսու, Անմայր՝ ի վեր, եւ անհայր ի խոնարհ, մի որդի չերկուց քնուծեանց խառնեցելոց եւ միացելոց Провосл. Палест. Сборникъ томъ XI, вып. первый, стр. 205 1892 թ.

*) Առասրէկից Պարզմանելով նորոգքները գնելուց յետոյ քննարկ մասին ճիշտ դադարաբ տալու համար դիտւմ ենք, եւ այն՝ քաղկեդով Правосл. Палест. Сборникъ, томъ XI, Выпускъ первый, 1892, стр. 199. Այդ նորոգքները յոյների առաջարկածներն են, որ հայր չընդունենցին։

«Առաջին նորոգք. ժեւ. դիւսոյն. զոր եղեալ է.

«Արդ եթէ որ ոչ խոստովանեցի որրոյ եւ կենարար ելքորդութեանն մի քնուծիւն եւ երեք անձիւնք, զհայր անպատճառ եւ զորդի ի հօրէ եւ զհօգին սուրբ ի նոցունց էութենէն հարթ եւ հաւասար եւ հաստրակաց, այնպիսին նորոգեալ եղիցի».

«Բ. եւ եթէ որ ոչ խոստովանի զորդին միածին մի ի սուրբ Երրոր-

աասխանի: եզրակացութեան մասում խօսում է միայն առաջին երեք տիեզերական ժողովների մասին, ապաքէն այդ պէտք է բա-

ղուցնելն Հուլիանոսի խնամարհեալ ի հայրական ծոցոյ եւ քնակեալ յարգանց սուրբ կուսին եւ անբաւեցին Աստուած պարունակեալ ի մարմին պարագրեցի եւ եկաց ի հօրէ անմեկնեցի եւ ի սրբոյ հոգւոյն անբաժանեցի. նզովեալ եղիցի այնպիսին:

ԵՆ. Որ ոչ խոստովանի քնուցեամբ միանալ ի մարմին բանին Աստուծոյ՝ անշփոթարար անբաժանապէս՝ աստուած եւ մարդ զոյսով անզոք քան զմիտս եւ զքան, աստուածն քան անճառ եւ հրաշափառ միաւորեալ քնուցեամբ ի մարմին եւ գնոյն ինքն աստուածն անճամանակ եւ մարդ ճշմարիտ, այնպիսին նզովեալ եղիցի:

ԵՆ. Եթէ որ ոչ խոստովանեացի տիրապէս ճշմարտարար զերջանիկն Մարիամ աստուածածին անձախարար յորովայնի կրեալ զանտանելին երկնից եւ սերտվելից, որ յառաջ քան զյաւիտեան ի հօրէ քանն ծառայական կերպի: Ծնեալ ի կուսէն անքննարար կենազորժող մարզկան, այնպիսին նզովեալ եղիցի:

ԵՆ. Եթէ որ ստա տմբարշտին Նեստորի ի կատարեալ համբակ առէ բնակել Բաւին Աստուծոյ եւ վասն այնորիկ անցրպետեացէ եւ որոշեացէ զքնուցիւնս ի միմեանց բաժանմամբ եւ Բ. զԼմս եւ Բ. կրեար արկանիցէ ի ներքս, մարդոյն ուրոյն եւ աստուծոյն որիշ՝ յերկուս սրդիս բաժանեալ եւ որոշեալ, այնպիսին նզովեալ եղիցի:

ԵՆ. Եթէ որ ըստ խելագարին Եւաիքի բարբանջէ. կամ յերկնից բերեալ զմարմին բանին Աստուծոյ եւ կամ յայլմէ Հուլիանէ կամ զաստուածուցեանն քնուցիւն ասէ շփոթեալ եւ փոխեալ ի մարմին եւ այնպէս սուտ հանէ զմեր փրկուցիւն, այնպիսին նզովեալ եղիցի:

ԵՆ. Եթէ որ ոչ խոստովանի, որ յաստուծոյ հօրէ քանն լեալ մարդ կատարեալ աստուածուցեամբն եւ կատարեալ մարդկուցեամբն, յերկուց քնուցեանց ի մի զԼմ եւ ի մի անձն միաւորեալ, էակից հօր ըստ աստուածուցեանն եւ զոյակից մեզ ըստ մարդկուցեանն յամենայնի առանց մեղաց, այնպիսին նզովեալ եղիցի:

ԵՆ. Եթէ որ զսուրբ երրորդուցիւնն չարչարեցի ասէ կամ ի խաչի քուսեալ կամ զորդի մերկ՝ առանց մարմնոյ աստուածուցիւնն ասէ կրեւ զչարչարանս ըստ բարբանջման Եւաիքի եւ մանիքիցւոյն եւ կամ ասէ սոսկ մարդ չարչարեալ ըստ ամբարշտին Նեստորի կատարուցեանն, այնպիսին նզովեալ եղիցի:

ԵՆ. Եթէ որ ոչ խոստովանեացի, որ ի հօրէ քանն աստուած զուէր մեր միասու Գրիստոս սուրբ, հօր եւ անմահ. որ խաչուցալ վասն մերոյ փրկուցեան մարմնոյ իւրով. սզորմուցիւն շնորհէ ազգի մարդկան, որ է

ցատրել, որ կորել է զոկումենտի վերջը ուր կարող էր տեղ ունենայ և Քաղկեդոնի ժողովը հետևեալ ժողովներէ հետ: Այսուամենայնս, Յիսուս Քրիստոսի մէջ բնութիւնների «խառնումն»

նոյն ինքն քահանայ եւ պատարագ եւ բարձող մեղաց աշխարհի, այնպիսին նզովեալ եղիցի:

ԷԺ. ԵՅ՛ է որ ոչ խոստովանի զորդին Աստուծոյ եղեալ որդի կուսին վասն փրկութեան հեծանուաց, զի զորդիս մարդկան արասցէ որդիս Աստուծոյ եւ զհոգեզէնս հօրն ընծայեցուցէ եւ զերկրաւորս ընդ երկնայինսն դասեցէ ի հանդէս լուսեզէն զօրացն, այնպիսին նզովեալ եղիցի:

ԷԺԱ. ԵՅ՛ է որ ոչ խոստովանի կատարեալ եւ փառաւոր անդուտ յորովայնէ կուսին զաւէր մեր Յիսուս Քրիստոս եւ անապական ըստ գերեզմանի բնաւ սպականութեան կամ ըստ մեղաց տեսակի տպականութեան եւ կամ առ հարկակիր որպէս զսոսկ մարդ, այլ ոչ խոստովանի կամաւորապէս կրեալ զմեզս վասն մեր ամենայնի առանց մեղաց, որպէս զի ի պատրանաց զյիսովին զմեզ փրկեցէ, այնպիսին նզովեալ եղիցի:

ԷԺԲ. ԵՅ՛ է որ բաժանիցէ զառարելական եւ զմարգարէական աւանդութիւնս ի միմեանց կամ զՆիկիականն եւ զԿոստանդնուպոլսականն եւ զԵփեսականն աւանդութիւնս յառարելոցն եւ ի մարգարէիցն տուուլութենէ, այնպիսին նզովեալ եղիցի:

ԷԺԳ. ԵՅ՛ է որ զՔաղկեդոնի ժողովն եւ զհետեւոզս Նորա հակառակ կամ զիմամարտ զիտիցէ առարելական կամ մարգարէական սահմանեալ տրւչութեան կամ երից սուրբ ժողովոցն աւանդութեանց եւ կամ վասն մարդահասութեանն եւ կամ վասն ընչասիրութեան եւ զնա ոչ նզովէ, նզովեալ եղիցի:

ԷԺԴ. ԵՅ՛ է որ զքաղկեդոնի զովովն կամ զհետեւոզսն Նորա զհինգերորդ ժողովն եւ զվեցերորդն եւ զեօթներորդն հետեւոզ եւ համախօն զիտիցէ առարելական եւ մարգարէական տրւչութեանցն եւ երից սուրբ ժողովոցն եւ յանդոնի նզովել կամ զքալարտել իբրեւ զպղծոյն Նեստորի համաձայնեալ, այնպիսին ինքն զինքն նզովէ, զի զրեալ է, ԵՅ՛ է որ զոչ արժանին նզովից նզովէ, յանձն իւր եւ ի զլուի իւր նզովքն եղիցին, եւ եղիցի նզովեալ:

ԷԺԵ. ԵՅ՛ է որ ոչ խոստովանի զԲանն Աստուած՝ իւր անբաժանելի մարմնովն յարչարեալ, անչարչարելի եւ անորոշելի աստուածութիւնն՝ անչարչարելի ի մարմինն եւ ի շարչարանս զօլով, այնպիսին նզովեալ եղիցի:

Նման բովանդակութեամբ մի ընդարձակ ՅուզՊ էլ Ստեփաննոս Սրնեաց եպիսկոպոսն, երբ զեռ քահանայ էր. բերել էր Կ. Պօլսից. նզովքի 42 յօդուածներով: Արա առիթն է այն, որ նոյն Ատեփաննոս երէցը Կ.

բանաձևը պահուած է և կրկնուած շատ անգամ, իսկ նշումներէջ մէկում, յատկապէս 11-րդում, զգալի է մթութիւն և լռութիւն, որ հնարաւոր է դարձնում ընդունել թէ ուղղափառական¹⁾ և թէ

Պօլսում եղած ժամանակ յանձն չէ առել յունական եկեղեցիներում հազարհազար Քաղկեդոնի ժողովի պատճառով: Այս թուղթը հաւանօրէն Գերմանիոյս պատրիարքը պէտք է գրած լինի, որին եւ ընդարձակօրէն պատասխանում է Ստեփաննոսը արդէն որպէս Սիւնեաց եպիսկոպոս (Գիրք Քղթ. կր. 339—393):

Ինչպէս որս հեղինակը ի դէպ կարծում է, Փօտի համարուած թուղթը, խմբագրած պէտք է լինի Նիկիայի արքեպիսկոպոս Յովնանը կամ ըստ հայոց Վահանը, գուցէ Փօտի հրահանգութիւնը աւաջնորդ սենեկայով եւ այն եւս Հայաստան գալուց յետոյ նախ քան Նիքոնիանի ժողովի քացումն: Որովհետեւ թղթի մէջ գուտ հայկական բնոյթ կրող այնպիսի մանրամասնութիւններ կան՝ որ հազիւ Փօտին յայտնի լինէին: (Եր. 279—294):

Գիրք Քղթոցում կան Փօտի առ Աշոտ իշխան հայոց եւ Աշոտի կողմից Սահակ վարդապետի (Ապիկուրէշ կոչուած) թղթերը, չկան Չարարիա կաթողիկոսի թուղթն առ Փոտ եւ վերջինիս՝ առ Չարարիա թուղթը, որ որս հեղինակի ուսումնասիրութեան ենթական է: Լաւ կը լինէր որպէս Գիրք Քղթոցի յաւելուած հրատարակել Փօտի համարուած թուղթը արտատպելով Правосл. Палест. Сборник-ից, եթէ դժուար է ըստել մեռապիք մատեաններից ուր Պերեւս գտնուի եւ Չարարիայի թուղթը առ Փոտ:

Թէ երկու հայրապետների միջեւ թղթակցութիւն եղել է, անկասկած է, որովհետեւ մեր պատմիչները յիշում են այն:

Հայ բարդ.

1) 13-րդ նշումը, ինչպէս յատպ է տեսում Գալանոսը, կարող է կասկած յարուցանել, եւ հասկացնել է տալիս, թէ որպիսի գրուչութիւն էր պահանջում հայ եպիսկոպոսներից. որ ընդունուէր Քաղկեդոնի ժողովը եւ Քչնամարտը որամտարուած բազմութեան տհաճութիւնն ու կասկածը չյարուցանէր. որս Պարզմանութիւնը այլ ընթերցում է տալիս, աւելի պարզ. թէ եւ այն գրութեանը, ինչպէս գտնում էր ժողովը, կարող էր նպատակա յարմար լինել այն բանաձևեր, որ տալիս է Գալանոսը: Ի հարկէ, 43 եւ 44 կէտերից վերջին եզրակացութիւնը պէտք է անպատճառ թերութիւն յօգուտ Քաղկեդոնի ժողովի. Այնուամենայնիս, բազմութեան այժմ փակելու համար կարող էին սարքել վարպետօրէն կազմած եւ 15-րդ կէտը:

Ռ. հեղ.

անֆթարատողականն *) հասկացողութեամբ 1) :

Իսկումենտի մատնանշած յատկութիւնները բացատրում են, պէտք է կարծել, նրանով, որ նրա նպատակն էր հաշտեցնել և բաւարարել, ըստ կարելւոյն, երկու կողմերը: Բացի ասուածներէց, Շիրակաւանի ժողովի մասին ուրիշ բան չգիտենք: Պէտք է կարծել, որ այնտեղ հաստատուել է հերետիկոսութեան դատապարտութիւնը, բայց Նիկիայի Յովհաննի առաքելութիւնը, ընդհանրապէս, յաջողութեամբ չպատկուեց, որը կարելի է գուշակել

*) Ա. ֆարատողակ—անապականութիւն գաւանդ. Միաբնակների մի ճիւղ, որոնք պնդում էին, որպէս թէ մարմնառութեան ժամանակ Քրիստոս Քրիստոսի մարդկային բնութիւնը կրանուեց աստուածային բնութիւնից և հետեւաբար երկու բնութիւններն էլ մուլուեցին ի մի:

Հայ բարդ.

1) Իսկանսոր մանրամասն վերլուծում է այն, թէ ինչպէս պէտք է հասկանալ նրա երեք մասերից իւրաքանչիւրը, խուսափելով Յուլիանոսի հերետիկոսական բացատրութիւնից: I. Յիսուսը փառաւորեալ և կատարեալ է յարգանդէ մօր. պէտք է իմանալ. Աստուծոյ հետ միացած լինելով հոգւով, այլ ոչ մարմնով, որ փառաւորուեց յարութիւնից յետոյ: II, Յիսուս անապական էր գերեզմանի և մեղքի վերաբերութեամբ, պէտք է տարբերել մարդու միջի ապականութեան երեք տեսակները. 1. մահից յետոյ մարմնի լուծուելը կամ գերեզմանում ապականուելը. 2, թերութիւնները, որ առիթ են մեղքի որինակ արատները. 3, անդատապարտելի անկարողութիւնները, որինակ, քաղցի, ծարաւի զգացմունքի ենթակայութիւնը: Հերքելով Քրիստոսի մէջ ապականութեան առաջին երկու տեսակները, կանսը երրորդի մասին բացատրութիւն չի աւելում. III. Քրիստոս՝ աննշաժետութեան ենթակայ չէր կիրեւորի. որպէս հասարակ մարդ, այլ յօժակամ կրեց մեզ պէս. Այս արտայայտութիւնը երկու նշանակութիւն ունի. ա. Ուղղափառական. թէև Քրիստոս որպէս մարդ, անհրաժեշտօրէն ենթարկուած եղաւ մարդկային անկարողութիւնների, բայց, որպէս Աստուած՝ կարող էր իրան հնազանդեցնել այդ անկարողութիւնները և արդեւ լինել նրանց: Նա եթէ ինքն նրանց հնազանդեց. ապաբէն այդ եղաւ իւր կամքի ազատ վճռով: Բ. Հերետիկոսական. Քրիստոս, ինչպէս մարդ, ենթակայ չէր մարդկային թուլութեան, որովհետեւ նրա մարմինը առանց կրքի, երկնային էր. և եթէ Նա չարչարուեց. այդ այն պատճառով որ ինքն կամեցաւ. թէև այդ բանին ընական անհրաժեշտութիւն նրա մարմնի մէջ վար, կամ նրա չարչարանները էին երեւութաբար: Սակայն այս հերետիկոսական կարծիքը հերքում է 7-րդ կանոնով և 44-րդի առաջին կէտով:

Փոսի՝ Աշոտին գրած թղթից ¹⁾։ Թուղթը ²⁾ վկայում է, որ ժողովը միութեան համար յաջող ելք չէ ունեցել։

Նիկիայի Յովհանի գեկուցմանը հայերը պատասխանել են հակահասութիւններով, որոնք յայտնուել են Կ. Պոլսում։ Փոսը հարկադրուել է պատասխանել նոր թղթով, այս անգամ ուղղուած Աշոտին։

Ուղղելով թուղթը աշխարհիկ կառավարչին և շկամենալով գուցէ կրկնութիւններ անել, Փոսը իւր թուղթը չի ծանրաբեռնում դաւանաբանական բովանդակութեամբ, բաւականանալով միայն մի քանի ապացոյցներով, և աւելի ուշադրութիւնը դարձնում է խնդրելով իշխանին աջակցել եկեղեցական հաշտութեան գործին։ Փոսը գրում է, որ ինքն համակուած է իշխանին նշմարտութիւնը ուսուցանելու հոգսով, իմանալով, որ հայ աշխարհը, հովանաւորուած Բարձրելոյ շնորհով, ընդհանրական եկեղեցու գաշնակիցն էր, բացասութեամբ իւր յարաբերութեան ³⁾ դէպ ի

1) Այս թղթի ժամանակը սրտշելու ապացոյցներ չկան. պէտք էր ուշ գարձնել թղթի երեք տեղերի վերայ։ 1) Փոսը ապացուցանելով Բաղկեղոնի ժողովի հեղինակաւորութիւնը, յենում է այն բանին, որ ժողովը ընդունում է պատրիարքական բոլոր աթոռներից, և առաջին տեղում դնում է Հոսովմներ։ Այս, ասում է, այն պատճառով, որ Թուղթը գրուած է մինչև Հոսովմի հետ վերջնական պատահաւոր մը 867 թ. երբ Փոսը կարող էր Հոսովմ անունը չյիշել։ 2) Թղթի վերջում Փոսը խոստանում է Աշոտին «օրթոթոքս սուրբ Թադաւորների» պաշտպանութիւնը, կարելի է կարծել, որ խօսքը աթոռակից Միքայէլ և Վասիլ Մակեդոնացիների մասին է. բայց Աշոտը պատասխան թղթի մէջ միայն մի Թադաւորի մասին է խօսում։ Մնում է միայն մի քանի թղթերի յիշատակութիւնը, որոնց Փոսը ուղարկել էր Ջարարիային. թղթակցութիւնը, ի հարկէ, կը պահանջէր բաւական ժամանակ, բայց սրբան. զժուար է ասել։

Ռ. հեղ.

2) Վերաւանութիւն. «Փառաւորեալ բարեպաշտութեամբ», հզօրագոյն կարողութեամբ, վեհագոյն ազգակիցների մէջ, Մեծ Հայաստանի իշխան Աշոտ։

*) Մեր փոյթ յանձին ունիմք վարդապետելով մեզ զճշմարտութիւն, մանաւանդ իմացեալ գաշխարհս մեր ի վերնական շնորհացն պահպանեալ, և լծակից եզեալ հանրական սուրբ եկեղեցւոյ, բաց ի միոյն՝ որ է այս Բանդի ընդդէմ Աստուծոյ և հակառակ ճշմարտութեան զյօրրորդ ժողովն սահմանէր, որ հաստատեաց զանկումն և զտարամերժումն նեւտորի և բարձումն զարշիք նորա խոստովանութեանն։ Ո՛վ որ արգեօք ոչ իմացի է՞՞՞ է՞՞՞ ոչ ընդունօգրն զժողովն Բաղկեղոնի անզգամբ են...»։ Գիրք թղթ (Եր. 279—282)։

Հ. քրդ.

Քաղկեդոնի ժողովը, Քայց պարզ չէ, որ այդ ժողովը մերժողները անմիաներ և Յիսուս Քրիստոսին հայհոյողներ են որովհետև այն ժողովում մերժուեց սատանայի պաշտօնեայ նեստորը, Ինչպէս էք եանձն անում հայհոյել և շարարանել շորրորդ ժողովը, երբ նա համաձայն է երրորդին: Սակայն^{*)}, որովհետև մենք ըստ ամենայնի փաստէ ենք թէ գուք վերին գորութեամբ հովանաւորուած սատուած գիտութիւնը ունիք, և ձեր ցեղակիցները Աստուծոյ ժողովուրդ են և բարձր են անարժան մարերից, իսկ մեր (բացատրութեան մէջ) սասածի¹⁾ փաստերն (վիճելի խնդրի առիթով), ձեզնից ստացուած թղթերի համեմատ, չեն յարդուած²⁾, ապաքէն բոլոր սուս մարերը, որ վերագրուած են ձեզ, կանհետանան, երբ գուք ընդունէք շորրորդ ժողովը հաւասար առաջին երեք ժողովներին: Քաղկեդոնի ժողովի որոշումները ընդունել են Կ. Պօլսոյ, Հասովայ, Աղէքսանդրիայի և Երուսաղէմի պատրիարքերը, և անկարելի է հակառակել այն հաւատին, որ տարածուած է բոլոր աշխարհում և որի մասին տաւած է, գրուեք դժոխոց զնա մի յաղթահարեացին (Մատ. մզ. 18): Պէտք չէ լսել սուս վարդապետներին, որոնք Յիսուս Քրիստոսի մէջ մի բնութիւն են վարդապետում: Վարդապետել այդ, նշանակում է մերժել ամեն բնութիւն, որովհետև եթէ ընդունեն վարդապետած մի բնութիւնը, ապաքէն դրանով կը հերքուի միւս բնութիւնը. իսկ եթէ ընդունենք Նրա մէջ երկու բնութիւնների շփոթումն, ուրեմն, կը նշանակի, ոչ մի բնութիւն չի մնացել իւր յատկութեան մէջ, և իւրաքանչիւրը նրանցից ոչնչացել է: Սակայն, երկար բացատրութեան կարիք չկայ, քո մեծութեան համար, քո թափանցող խելքով, ձգմամբ դէպի հըշմարտութիւնն ու ցանկութեամբը բարեկամութիւն կապել՝ բաւական է ինչ որ տակ եմ, մանաւանդ որ, մի քանի անգամ ընդար-

*) Եւ արդ փասն զի հաստատագոյն ունիմք զգիտութիւն Աստուծոյ գոյ մեծութեանդ ձեր՝ ի վերնական գորութեանցն պատգամեալք և ժողովուրդ Աստուծոյ ազգդ ձեր ևւ արտարոյ անվայելուչ կարծեաց այլ փասն զի ժամանեցին սա մեզ փասն ստացելոյս ի մէջ անընդունակ պատմաոք ի մէջ ի մեռն գրոյ (Նիքր Թղթ. 279—280): Ռուսերէն մէջ ընթացն որքան բովանդակութեամբ նման են հայերէնին, այնքան եւ բառացի տարրեր են:

Հ. րդ.

1) Առաջին Թղթերի ևւ, գուցէ, Նիկիայի Յովհանի զեկուցման մէջ: Ռ. հեղ.

2) Այս խոսքերն էլ ապացուցածուծ են. որ Նիքաիանի ժողովը, զանէ, իւր անդամների մեծամասնութեամբ հրաժարուել է միութիւնից: Ռ. հեղ.

ձակօրէն գրել ենք ձեր դաստիարակին ու քահանայապետին ինչի մասին այժմ յիշեցնում ենք ձեզ, այն է, հաստատուել ամբիժ հաւատի մէջ: Ընդդէմ նւարեղսի ու Նեստորի, առաջ բերելով ուղղափառ վարդապետութիւնը, որը հերքում է Աստուածութեան շարշարանքի մասին դադափարը, Փոռը վերջացնում է ինդրելով*) իշխանին վարժել իւր ժողովրդին ճշմարիտ հաւատին, որովհետեւ ուղիղ հաւատը, բազմապատկուած սիրով, ամենից հանելի է Աստուծոյ, և այն կը շատացնի իշխանի կարողութիւնը ինչպէս Աստուծոյ ոգորմութեամբ նայնպէս և ուղղափառ սուրբ թագաւորների օգնութեամբ և կը դարձնի նրան ժառանգ ինչպէս ներկայ նայնպէս և ապագայ թագաւորութեան: Թղթի հետ ուղարկում է շի յիշատակ մեզ մօտ եղած աստուածակիր սուրբ խաչի մասնու:

Փոռի թուղթը իշխանի կողմից անպատասխան չէ մնացել: Բայց, որովհետեւ ինչպէս ինքն Աշոտը յայտնում է, աշխարհային հոգսերը թոյլ չեն տալիս իրան աստուածընական խնդիրներով զբաղուել, ուստի և պատասխանի խմբագրութիւնը յանձնել է հայ գիտնական Սահակ վարդապետին: Վերջինս հարկ է համարել հիմնական և լուրջ բանակառւի մէջ մտնել Փոռի հետ Յիսուս Բրիատոսի մէջ երկու բնութիւնների մասին ինդրի առիթով: Թղթի էական բովանդակութիւնը յանդում է այն բանին, որ Քաղկեդոնի ժողովը վճռապէս մերժում է, որպէս ըստ ամենայնի համաձայն Նեստորին և բնդհակառակն՝ անհամաձայն Կիւրեղ Աղէքսանդրացուն: Իսկ հայ եկեղեցու վարդապետութիւնը բացառւում և հիմնաւորում է որպէս ուղղափառ:

Աշոտը գրում է**). «Միմաստուն, բարեպաշտ և առաքինի վարքով ի Քրիստոս Փոռին, որ ինքն ուրախ եղաւ նրա թղթով, որ յայտնում է, նրա առողջութիւնը և յիշեցնում նրանց միջև եղած հին բարեկամական յարաբերութիւնը:

*) Արդ՝ մի հեղգացիս, ով վսեմադոյնդ, ուսուցանել զժողովուրդն Քրիստոսի եւ ամել ի ճշմարիտ խոստովանութիւն հաստատոյ, զի չիք ինչ հաճոյազոյն Աստուծոյ քան զճշմարտութեամբ Տանաւել զՆա եւ ուղղակի խոստովանութեամբ փառաւորել եւ սիրով առաւելեալ եւ հաստատեալ եւ ոչ երբէք խոտորեալ, որով եւս քան զեւս հանդիպիս Տոխոմեան նախ՝ յԱստուծոյ, պահպանական շնորհիւն ամբացեալ ի թշնամեաց եւ յորոգայթիցն զպահանեալ պատահմանցն, զիչի եւ յոր Թէոզոսաց սուրբ թագաւորացն զհրաքանչիւրսն ժառանգելով այժմուս եւ զհանգերձեալսն . . . (Նիրք Թղթ. 284):

**) Քահանայապետ զգաւնացեալ պարկեշտ եւ առաքինաւէ, որ ի Քրիստոս վարուք, Փոռ. (Նիրք Թղթ. 285):

Իշխանը համեստօրէն խոստովանում է, որ ինքն օժտուած չէ երկրային գեղեցկութիւնը դիտելու. ընդհակառակն, նա շղթայուած է երկրին, նիւթականին. և ի բնէ հակումն ունի դէպ ի ստորայինը: Բակ Բիւզանդիայի պատրիարքի առաքինի անձնաւորութիւնը գրադուած է սուրբ գրքերի ուսումնասիրութեամբ և առաջնորդում է սիրոյ պատուիրանով, որով և դաստիարակում է «արդարեւ ազդոյ և հանձարեղ խօսքերով»: Եւ լաւ ևս կը լինէր, եթէ սէրը ամրապնդուէր ուղիղ հաւատի միութեամբ: Դժբաղդարար, միութիւնը խախտուած է հերետիկոսներով, որոնց դէմ ուղղափառ թագաւորները գումարել են երեք տիեզերական ժողովները: Միայն Մարկիանոսը Պուլխերիայի ազդեցութեան տակ, որ երբեմն Նեստորի պաշտպանն էր, շեղուեց այն թագաւորների օրինակից և գումարեց շորրորդ ժողովը, ուր ժողովուել էին, ոմանք երկիւղից, ուրիշները հանոյանալուց: Այդ մասին ընդարձակ գրել աւելորդ է: Բաւական է հասկացնել, որ ժողովի հանգամանքները հայերին բաւական յայտնի են:

Աշտի ստացած թղթի մէջ շորրորդ ժողովին պատուաւոր տեղ էր տրուած, հաւասար երեք առաջիններին, և պահանջ էր յայտնուած ընդունել այն: Մինչդեռ մեր հայերն ու վարդապետները երբէք չեն ընդունել այն, այնտեղ եղած տարածայնութիւնների և այդպիսով ժողովական վճիռները խանգարուելու հետեւանքով, վճիռների, որոնք մի Յիսուս Քրիստոսի մէջ երկու բնութիւն էին յայտարարում. անբաժան և անշփոթ միաւորութեամբ: Արովհետեւ Քաղկեդոնականները բաժանեցին Նրան յերկու բնութիւնս, յերկուս գործողութիւնս և յերկուս կամս, հետեւելով Նեստորական մոլորութիւններին, և միայն բնութիւնների միութեան մասին ծանօթութեամբ, որպէս թէ զբանով տարբերում են Նեստորից՝ համոզեցին և հրապուրեցին պարզամիտներին: Այնուհետեւ Աշտը ջանք է անում ապացուցանել, որ քաղկեդոնական որոշումները համանման են Նեստորականութեան. և նա քաղուածներ¹⁾ է անում իրար հանդէպ գնելով Նեստորի հա-

1) Միմեանց հանդէպ գրուած են չորս քաղուածները: Այ մէկը նրանցից չի վերաբերում առաջադրեալ հարցերին. Յէ ի՞նչպէս են միացած Քրիստոսի մէջ բնութիւնները եւ ի՞նչ է ստացուել միանալուց յետոյ: Եօօրը այն մասին է, Յէ Նեստորն ու Լեւոնը երկու բնութիւն են ընդունել: Մի երես առաջ ինքն Աշտան է խօսում երկու բնութիւնների միանալու մասին. ինչպէս եւ յետոյ պէտք է խօսի գրանց մասին ստորեւ, եւ առանց մեծ դժուարութեան կարելի կը լինէր Նեստորից առած Աշտի քաղուածներով, որ ի հարկէ, ամենեւին կապ չունեն ընդհանուր Նեստո-

ւասոյ մասին, քարոզներէց և լեռն պապի թղթից, որով Քաղկեդոնի ժողովը իւր դաւանութեան դրութիւնը տարօրինակ և այլանդակ դարձրեց: Աշտի կարծիքով Քաղկեդոնի, Նեստորական նախնայ, վարդապետութիւնը բոլորովին շեղում է Կիւրեղ Աղէքսանդրացու վարդապետութիւնից, որը, սգրում է Սուկէնին իւր ձուռքին թղթում, մենք ընդունում ենք մի Որդուն, ինչպէս և հայրերը ընդունել են, մի բնութիւն մարմնացեալ Բանի: Բնչ յարարութիւն կայ Քաղկեդոնի ժողովի և Կիւրեղի միջև,

բազան դադարաբի հետ, ապացուցանել նեստորականութեան նմանութիւնը հայ եկեղեցու վարդապետութեանը: Ռ. Ինդ.

Այդպէս՝ սուս հեղինակի կարծիքով՝ մենք Յիւսէ փոքր ինչ կերկարի-բայց գնում ենք այդ, միմեանց հանդէպ դրած, չորս քաղաւածները. Յոգնելով ընթերցողներին դատել, Յէ յիբաի՞ դրանք չեն վերաբերում առաջադրեալ հարցերին: Ահա.

Ա.

«Գրէ Նեստոր յիւրում գլխաւոր արամարանութեան հաւատոյն Բանի այսպէս. Եւ անփոփոխելի և անայլայլելի Բանին Աստուծոյ երկուս բնութիւնս խոստովանիմ. Աստուած Տշմարիտ յԱստուծոյ մշմարտէ, և մարդ կատարեալ ի գաւակէ Գաւթի և Արրահաւաւ:

«Գրէ Լեւոն յիւրում տուժարին. Աստուած խոստովանիմ ըստ այնմ, ըստ որում ի սկզբաննէ էր Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն. և մարդ խոստովանիմ ըստ այնմ, ըստ որում Յարմին եղեւ և տաղաւարեաց ի մեզ:

Բ.

«Գրէ Նեստոր. Ոչ Բանն Աստուած հանդերձեցաւ պատանաւք ի Յովսէփայ, այլ մարմինն ի Յովսէփայ:

Գրէ Լեւոն. Արևն փայլէր Աշանագործութեամբ, և միւսն ընդ շարչարանաւք ստոր անկեալ:

Գ.

«Գրէ Նեստոր. Բանն մարմին եղեւ և տաղաւարեաց ի մեզ:

«Գրէ Լեւոն. Բնաստուն յինոզին իւր տուն, զի Բանն մարմին եղեւ և տաղաւարեաց ի մեզ:

Դ.

«Գրէ Նեստոր. Աերկական առ Բրիտանո որոշեմ բնութիւն, զի կրկնակ ահա բնութեամբ. իսկ արժանաւորութեամբ մի:

«Գրէ Լեւոն. Բաղցնայն և ծարաւելն, գասաակելն, անշեյն, խոս-

կրք վերջինս և փեսոսի ժողովի համաձայն որոշում է մի բնութիւն միացեալ յերկուց, իսկ Քաղկեդոնի ժողովը որոշեց բաժանել յերկուս բնութիւնսս: Այլ քաղուած Աշտար մէջ չի բերում, որովհետև, պատասխանը յարմարացուած է Փոսի թղթին, իսկ թղթի մէջ ասիթ չէ եղել կարգալ առանձին հոգացողութեամբ ժողովուած քաղուածներ սուրբ վարդապետներից ու հայրերից:

Մեծ վնասկանութեամբ հերքելով այն, որ Փոսը հայ եկեղեցու վարդապետութիւնը մօտեցնում է Եւտիքականութեան, Աշտարի թուղթը հարկաւոր է համարում բացատրել, թէ հայերը ինչպէս են հասկանում Բրիտանոսի մէջ մի բնութիւնը: Այս երկկողմ բնութիւնը պարզ չէ, այլ բազադրեալ՝ ինչպէս մարդու մէջ արտում են հոգին ու մարմինը, թէև նրա (մարդու) մէջ ընդունում են մի բնութիւն: Եւ Ս. Գիրքը մարդ բառով հասկանում է երբեմն հոգին երբեմն մարմինը, այսպէս ևս խօսում է այն (Ս. Գիրքը) Յիսուս Բրիտանոսի միացեալ բնութիւնների մասին, երբեմն Աստուածութեան և երբեմն մարդկութեան վերայ մասնանշելով, և այս՝ նրանց անբաժան միութեան պատճառով:

Այնուհետև քննութեան են ենթարկում Փոսի առաջ մզած ասարկութիւնները ընդդէմ մի բնութեան մասին վարդապետութեան, մանաւանդ երկրորդը (ասարկութիւնը) որը Աշտարին ռզարմացրել է: Բնութիւնների խառնուիմն բնաւ չի նշանակում նրանց փոխադարձ դանդուիմ: Այն անփոփոխ և անբաժան է ինչպէս լուսի խառնուելը օդի հետ, կամ կրակի՝ սկիւ հետ, կամ հոգու՝ մարմնի հետ. այս մարքով էլ գործ է ածել այս բանաձևը Գրիգոր Աստուածարանը և Գրիգոր Լուսաւորիչը: Հարերը ի զուր չեն

տալանարար է մարդոյ, այլ ի հինց հացէ զհինց հազարսն յաղեցուցեալ, սամարուհւոյն զկենդանական չուրն շնորհեալ, և ի վերայ մկանանց ծոփուն ճեմելն, և զկոծակս այսմանց ծոփուն վերասասանլով մրրկին խաղաղացուցանել, աներկրայապէս է Աստուծոյ:

Սգրակացութիւն Հայոց

«Տեսն՝ք, ս՛գ սիրելու թիւն, զհամաձայնութիւնց նեօտարի ընդ Լեւոնի, առ ընտ. թեանցն զանազանութիւն և ևերգործութեանց յատկութիւն: Արգ. զինչ աստանար իմաստար, որ ստիպիմ ի քոյց սրբութենէ (ի Փօսէ) ընդունել զժողովն Քաղկեդոնի: Տեսան մերոյ ասացեալ է. որ սիրէ զհայր կամ զմայր ասաւել քան զիս. չէ ինձ արժանի: Արգ, ոչ կարեմք զՔաղկեդոն սիրել զբաժանողն յերկուս զսի Բրիտանոս, և զԲրիտանոս ասել, որ իւրովն փրկեաց զմեզ պատուական արշամբն: Գիրք Թղթ. (եր. 284—285):

օգտուել երկու բաներով, երբեմն «խառնումն» երբեմն «միացումն» ասելով, Պատմամբ վերացում է բաժանումն, իսկ միացումն ոչնչացնում է երկուութիւնը, առանց ոչնչացնելու միացած տարրերը: Աւելի եւս հրէշուոր է երևում Աշոտին Փոսի միտքը, թէ Քաղկեդոնում ընդունուել է երկու բնութիւնների վարդապետութիւնը. որպէս զի վերացուի աստուածաշարշար զաղափարը: Այդ նեստորի միտքն է, որը հերքուել է Կիւրեղից, որը ապացուցել է նեստորին թէ մարդկային բնութեան շարշարանքները չէին վերաբերում Աստուածութեան, այնպէս, ինչպէս աչքի կամ մարմնի անդամի կորուստը չէ խեղում հոգուն:

Յետոյ թուղթը ձգտում է ապացուցանել, որ բնութիւնների բաժանումն անխուսափելիորէն տանում է դէպի դէմքերի բաժանումն եւ, հետեւաբար, դէպի իսկ նեստորականութիւն: Ինչ վերաբերում է հայ եկեղեցու հերետիկոսութեան, ապաքէն, շերքէք, եւ Հայաստանի ոչ մի մասում հերետիկոսութիւն չէ թափանցել: Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով անարատ հաւատքը նրա մէջ հաստատուելուց սկսած, այս հաւատը հայերը պահպանել են անփոփոխ. շուտի եւ կարիք չէ եղել նորահաշակ վարդապետութիւնների եւ զանազան տեսակ տեղական ժողովների, որոնք հակուած են, ինչպէս գիտենք, կերպարանափոխելու կարգերը եւ հաւատոյ որոշումները, որոնք սահմանուած են Ս. Հոգու ներշնչութեամբ: Որպէս զի ցոյց արուի, թէ հայերի վարդապետութիւնը ինչպէս հետի է եւտիքականութիւնից, յետոյ առաջ է բերում այն (վարդապետութիւնը) պէտք է ասել, ըստ ամենայնի ուղղափառ բանաձևով, բայց յայտնապէս բացառելով «երկու բնութեանց բանաձևը»¹⁾:

1) «Աստուծոյ Արդին միշտ կոյս Աստուածածնից բնուելեց մարդկային կատարեալ բնութիւն—հոգի, մարմին եւ միտք, առանց մարմինը անմարմնութեան փոխելու եւ առանց փոփոխելու Բանին Աստուծոյ անփոփոխ բնութիւնը: Նա միացաւ մարմնին անշփոթ եւ անբաժան, եւ իւր կամքով՝ մարմնով կրեց բոլոր մարդկային կրքերը՝ բացի մեղքից... Մի Գրիգորս բարոզեց աշխարհում, այլ ոչ երկու, մէկը՝ մեռածնէլի միտք անմահ (Ա. Կորնթ. Ը. 6. Փիլիպ. Բ. 10. Երբ. ԺԿ. 8): Երկու բաժան բնութիւն չեն, կողք կողքի ընթացող կամ զոյգ զնացող, որպէս թէ զուգորար ընծայեցնում են (կազմում են) զերնագոյնը», այլ «Մի Տէրն է փրկում» եւն: Այն տպագրութիւնն է ստացւում, թէ տարբերութիւնը տպագրում է բանաձևով եւ, «մի դէմք եւ երկու բնութիւն» բանաձևը՝ բնուելեց կը վճռէր վէճը:

Քղթի եզրափակութեան մասնում Աշոտը պատրաստականութիւն է յայտնում համաձայն Փոսի խորհրդի, լիակատար հպատակութեան և ծառայութեան մէջ մնալ առ Բիւզանդական աստուածապարզ Թագաւորութիւնն¹⁾, որից նա երբէք չէ խուսափել, միշտ սպասելով, թէ ինքնակալ Թագաւորը ինչ հրաման կարձակի, որ իսկոյն կատարի: Յայտնելով իւր բարեկամութիւնն առ Փոս, «համապատասխան նրա վաստակած մեծութեան աստքիքի, արժանաւոր և մաքուր կեանքի», և խնդրելով նրա ազօթքները, իշխանը աւարտում է իւր թուղթը յիշելով՝ որ ինքն խորը երկրպագութիւն արեց Ս. Թաշի ուղարկուած մասնին²⁾:

Աշոտի պատասխանը ոչ մի կասկած չի թողնում, որ Շիրակաւանի ժողովը ցանկալի արդիւնք չէ տուել, որ հայերը, գոնէ մեծամասնութեամբ, ոչմ չունեցան ազատուելու Քաղկեդոնական որոշումների մասին իրանց ունեցած նախապաշարումից, և յամառութեամբ շկամեցան կամ անընդունակ գտնուեցին տարբերութիւն գնել օրթոդոքսութեան ու նեստորականութեան մէջ²⁾:

Եթէ Փոսի ջանքերը չպսակուեցին լիակատար յաջողութեամբ, բայց մասամբ, այնուամենայնիւ, յաջողութիւն ձեռք բերուեց: Կայ կողմնակի տեղեկութիւն, որ Շիրակաւանի ժողովում Փոսի թուղթը ընդունուեց, թէև փոքրամասնութիւնից: Փոսի յետագայ թղթակցութիւնները Զաքարիայի հետ անհետևանք չեն մնացել, և եթէ հայ եկեղեցին պաշտօնապէս չէ միացել յունական եկեղեցուն, բայց փոխադարձ յարաբերութիւնը նրանց միջև այնքան լաւացան, իսկ միութեան կողմնակիցների թիւը այնքան մեծացաւ, որ Փոսը իրաւունք էր համարում շրջաբերական թղթում 867 թ. յայտնել թէ հայ եկեղեցին միացել է ընդհանրական եկեղեցուն:

Իրաւոր վէճը, Փոսի՝ Զաքարիայի ու Աշոտի հետ թղթակցութիւններով շահամանափակուեց: Իսլամաբանական խնդիրների քննութիւնը ստիպեց ծիսական տարբերութիւններին էլ դիպչել, և կաթուղիկոսը ցանկացաւ Նիկիայի Յովհանից բացատրու-

1) Նկարագրուած ժամանակին փաստացի հպատակութիւն չկար:

*) Գիրք Յղթոց. 292—5: Ռ. հեղ.

2) Քաղկեդոնականներն էլ չեն կամեցել եւ չեն կամենում հայ եկեղեցու վարդապետութեան եւ Եւսեբականութեան մէջ տարբերութիւն գնել: Միսուս Գրիստոսի քննութեան խնդիրը հայերը ընդունում են Կիւրեղ Աղէքսանդրացու վարդապետութեան համեմատ՝ ընդդէմ Նեստորի. Քաղկեդոնի որոշումն Գրիստոսի քննութեան մասին է ընդդէմ Լուսիբէսի:

Թիւն ստանալ օրթոդոքս եկեղեցում Քրիստոսի ծնունդն և Աստուածայայտութիւնը առանձին տօնուելու մասին: Յովհանն պատասխանեց, օրթոդոքսական սովորութիւնը յուսարանոց մի կարն յողուածով: Աշոտի թուղթն էլ անպատասխան չմնաց: Բիւզանդիայում, գրան պաշտօնական նշանակութիւն տուին, և աշխարհիկ կառավարութիւնը պէտք համարեց ինքն էլ մասնակցել արժանի պատասխանը խմբագրելիս: Բայց օրովհետև Աշոտը ինքն անձամբ չէր գրել իւր թուղթը, ուստի բարեոք համարեցին թղթի խմբագրութիւն յանձնել ոչ թէ Փոտին, այլ կողմնակի անձի: Ընտրութիւնի հանգու Բիւզանդացի գիտնական Նիկիտայի վերայ, որը շքրիստոսասէր և բարեպաշտ (Միքայէլ) կայսրի հրամանով պատրիարքի կողմից գրեց Աշոտի թղթի պատասխան քրացարութիւնն ու հերքումն, Միքայէլի ու վասլի ակնուկցութեան տարին: Թղթի սկզբում ասուած է, որ հովուապետի պարտքը պահանջում է նրանից—պատրիարքից, մաքառել մուսուրութիւնների դէմ և հրաւիրել դէպ ի ուղիղ հաւատը, որը և նա արել է, ջանալով թղթերով համոզել հայերին ընդունել Քաղկեդոնի վարդապետութիւնը: Ասկայն նրա յոյսերը չեն արդարացել, և թղթերի մէջ առաջ բերուած վարդապետութիւնը ոչ միայն չէ ընդունուել, այլ գրգել է իշխանին դուրս գալ դրանք հերքումներով: Այս հերքումներն ու ամբաստանութիւնները առ օրթոդոքս հաւատն պատրիարքը չի կարող առանց պատասխանի թողնել: Այնուհետև Աշոտի թուղթը ենթարկուած է մանրամասն վերլուծաթեան, և բերում են բառացի քաղուածներ:

Գուցէ հայերի հետ յարաբերութիւնները տային, վերջ ի վերջոյ աւելի բարեյաջող հետևանք, եթէ Փոտը դարձեալ իշխանութեան մէջ մնար¹⁾: Յամենայն դէպս, Փոտը, հիշող էր իմա-


1) Յետոյ Միստիկ-Նիկոզայոս պատրիարքի օրով (904—907—911—925), եկեղեցական յարաբերութիւնները հայերի և Բիւզանդիայի միջև վերսկսուեցին: Ամբաս Բաղրատունին (890—914), Աշոտի օրով, մասձեց մինչեւ անգամ ուղարկել և Պօլիս իւր կաթաղիկոսական թեմածածուին, որ նա այնտեղ մեռնադրուէր: Նիկոզայոսը իւր թղթում քաջալերելով այս ցանկութիւնը, նորից Հայոց և Պօլսոյ եկեղեցու հետ միութեան հարցն է յարուցանում յիշեցնելով Փոտի փորձերը, միութիւնը գլուխ բերելու համար, որ արժայատուած են թղթերով և ղեապաններով, բայց հանգամանքներն արգելք են եղել դորձը գլուխ հանել: Միութեան համար աւելի յուրջ շանքերի մասին Մանուէլ Կոմնենոսի օրով (1143—1180 թ) տես Н. Троицкія 263 եւ շար:

նում, որ հայկական խնդիրը մէկն է Բիզանդական եկեղեցու քաղաքական էական և ժառանգական խնդիրներից և լուծելու համար արեց ինչ որ հարկաւոր էր: Նշանաւոր Պատրիարքի այս ջանքերի յիշատակը պահպանուեց նրա աշակերտների և նրա գործը շարունակողների մէջ, որպիսիք էին Նիկոզայոս Միստիքը, Կ. Պօլսոյ աթոռի նրա երբորդ յաջորդը, և Կեսարիայի միաբազմ- լիա Արեթան, որոնք հայկական խնդրում ընթանում էին իրանց սուսուցչի ուղիով¹⁾:

քաղ. Յուսիկ Արեւայ.

28 հոկտ. 1916 թ.

Ս. Էջմիածին



1) Н. Троицкий 230 եւ շար. Արեթան իւր թղթի մէջ՝ որ առ Լայս, հայ եկեղեցու մոլորութիւնների զէմ մարառող յոյն եկեղեցու գործիչների շարքում յիշում է եւ Փոտին: «Նրանց մէջ է եւ նա, որը նոյն իսկ վերջին ժամանակս իւր ծագմամբ համարում է սուրբ եւ անկի եւս սուրբ՝ իւր ոչ միայն սաստուածային այլ եւ մարդկային իմաստութեամբ: Ա՞յ է նա—Փոտը, որ այժմ բնակում է երկնային անմատոյց բնակարանում: որը ազնիւ խօսքով, հոգու բարեպաշտ վճռականութեամբ, անյազմելի եւ ամուր համազմամբ, յարժակում էր ձեր հայերիցդ նրանց վերայ, որոնք Ձե՞ծեւամտարար են դատում (հաւատոյ խնդիրներում), ունէր հաղաւթողորդների այնպիսի մեծ հնազանդութիւն, ծրրէր գործը ըմբռնելու մէջ սխալ չմտցրեց, եւ այնքան իրաւամբ բնակուեց օթեւաններում կամ Աստուծոյ յարկերում»: А. Papadopoulos Kerameus. Monumenta graeca et latina ad historiam Photii patriarchae pertinentia. Petropoli 1899. p. 40.

Ռ. հեղ.